ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 173 – Ա

05 սեպտեմբերի 2017 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2017 թվականի փետրվարի 2-ի N 20-Ն որոշումը՝

որոշում եմ՝

1. Հաստատել 2017 թվականի սեպտեմբերի 6-ին, ժամը 11^{00}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Մարտունու սոցիալական աջակցության տարածքային գործակալության սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 64-3.2-12) թափուր պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային հանձնաժողովի կազմը՝ Միքայել Եղիազարյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ), Կարեն Բարսեղյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի ներկայացուցիչներ, Սուրիկ Խաչատրյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ), Վերգինե Ղուկասյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ)՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Գայանե Խանամիրյան (Գավառի N 4 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն), Մելանյա Հովակիմյան (Գավառի N3 միջնակարգ դպրոցի տնօրեն)՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահի նշանակել Մ.Եղիազարյանին, քարտուղար՝ Կ. Բարսեղյանին:

3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտմամբ հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ